

ՀԱՎԵԼՎԱԾ 2

ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՎ ԽԱՂԻ ԿԱՆՈՆՆԵՐԻ ՀՐԱՅԱՆԳԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Փեյնթբոլի մարկերի (այսուհետ՝ մարկերի) գործածման կանոններ.

Մարկերը ենթակա է գործածման միայն խաղի ընթացքում խաղադաշտի սահմաններում:

Խաղադաշտի սահմաններից դուրս և ընդհանուր օգտագործման տարածքում խաղացողները պարտավոր են մարկերի փողը ծածկել դրա համար հատուկ նախատեսված ծածկոցով:

Մարկերները խաղացողներին հանձնվում են կազմակերպչի կողմից նախապես կարգավորված և ստուգված վիճակում: Մարկերից արձակված ներկազնդիկը չպետք է ընթանա ավելի քան 300 \$/վրկ (\$ուտ/վայրկյան) արագությամբ:

Լեռնյայն կարգավորումներով մարկերներն աշխատում են կիսաավտոմատ ռեժիմով. ձգանը մեկ անգամ սեղմելու դեպքում մարկերը կրակում է միայն մեկ ներկազնդիկ:

Արգելվում է ինքնուրույն փոփոխել մարկերի կարգավորումները:

Խաղի համար թույլատրվում է օգտագործել բացառապես Կազմակերպչի կողմից վաճառվող/տրամադրվող ներկազնդիկները: Խաղացողներին արգելվում է օգտագործել գետնից վերցված ներկազնդիկները:

Խաղադաշտի ընդհանուր կանոնները

1. Եթե ներկազնդիկը հարվածում է Ձեզ և կոտրվում է, ապա Դուք դուրս եք մնում այդ խաղից:
2. Մարկերն օդ բարձրացնելը նշանակում է, որ Դուք խաղից դուրս եք: Այդ դեպքում խաղադաշտը պետք է անմիջապես լքել:
3. Չի թույլատրվում կրակել՝ աչքերը փակ: Թաքստոցից առանց նայելու կրակելը կարող է վնասվածք պատճառել մյուս խաղացողներին, անձնակազմին և հանդիսատեսին:
4. Եթե մրցավարը շուտ է դադարեցնում խաղը, ցած ուղղությամբ մարկերը և սպասե՛ք հետագա հրահանգներին:
5. Արգելվում է 3 մետրից ավելի քիչ հեռավորության վրա գտնվող խաղացողին կրակելը:
6. Մի՛ կրակեք խաղացողներին այն բանից հետո, երբ արդեն հայտարարվել է, որ նրանք խաղից դուրս են:
7. Խաղացողները պարտավոր են խաղի ողջ ընթացքում կրել պաշտպանիչ դիմակ:

Մրցավարների և խաղացողների միջև փոխհարաբերությունները

Խաղացողները և մրցավարները պետք է լավագույն ջանքերը գործադրեն խաղի ընթացքում պահպանելու փոխադարձ հարգանքի, առողջ մրցակցության և սպորտային ընկերության մթնոլորտը:

Խաղը վարում են Կազմակերպչի կողմից ներգրավված մրցավարները, որոնք միաժամանակ հանդիսանում են Կազմապերպչի լիազոր ներկայացուցիչը:

Խաղի ընթացքում խաղացողների համար մրցավարների որոշումները պարտադիր են, որոնք իրավասու են իրենց հայեցողությամբ դուրս հանել խաղացողներին խաղադաշտից կամ ողջ տարածքից:

Մրցավարն իրավունք ունի դադարեցնել խաղը, եթե խաղացողները չեն ենթարկվում նրա հրահանգներին կամ չարամտորեն խախտում են խաղի կանոնները:

Տարիքային սահմանափակում և առողջական հակացուցումներ

Խաղին մասնակցելու համար Դուք պետք է լինեք առնվազն 14 տարեկան: Բոլոր անչափահաս խաղացողների մասնակցությունը խաղին թույլատրվում է միայն ծնողի, կամ օրինական ներկայացուցչի գրավոր համաձայնության ամկայության դեպքում:

Խստիվ արգելվում է խաղին մասնակցել ոչ սթափ վիճակում, ալկոհոլային, թմրամիջոցային արբեցվածության կամ հոգեմետ նյութերի ազդեցության ներքո:

Յուրաքանչյուր մասնակից ինքն է կրում խաղի ընթացքում իր առողջությանը պատճառված վնասի ռիսկը:

Խաղացողը պարտավոր է անմիջապես դադարեցնել իր մասնակցությունը խաղին, եթե զգում է, որ խաղի պայմանները վտանգավոր են իր առողջության համար:

Չանդերձանք և պարագաներ

Խաղացողները պարտավոր են իրենց տրամադրված հանդերձանքն ու պարագաներն օգտագործել խնամքով և ողջամիտ ջանքեր գործադրել դրանք վնասումից զերծ պահելու համար:

Չանդերձանքի և պարագաների նկատմամբ անփույթ վերաբերմունքի հետևանքով կամ դիտավորությամբ պատճառված վնասը առաջացնում է պատասխանատվություն ԶՅ օրենսդրությամբ սահմանված կարգով:

